ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 նոյեմբերի 2016 թվականի N 1159 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին և 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1555-Ն որոշման N 11 հավելվածի NN 11.11 և 12 աղյուսակներում կատարել լրացումներ ու փոփոխություններ՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Ասիական զարգացման բանկի Ներդրումների խթանման ծրագրի շրջանակներում 2016 թվականի աշնանը ԱՄՆ-ի Նյու Յորք քաղաքում նախատեսվող ներդրումային ֆորումի կազմակերպչական աշխատանքների իրականացումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված

Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից 2016 թվականին հատկացնել 62500,0 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (բայց ոչ ավելի, քան 30000.0 հազ. դրամը) (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով):

3. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարին՝ ապահովել Հայաստանի զարգացման հիմնադրամի հետ սույն որոշման 2-րդ կետում նշված գումարի դրամաշնորհային պայմանագրի կնքումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թ. նոյեմբերի 18
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2016 թվականի
նոյեմբերի 10-ի N 1159 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.11 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Չափորոշիչներ		Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)	
		ոչ ֆինանսական ցուցանիշներ	ֆինանսական ցուցանիշներ
		տարի	տարի
ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները **1. Քաղաքականության միջոցառումներ** 1.1. **Ծառայություններ**			
Ծրագրային դասիչը	<u>Անվանումը</u> Ասիական զարգացման բանկի Ներդրումների խթանման ծրագրի շրջանակներում 2016 թվականի աշնանը ԱՄՆ-ի Նյու Յորք քաղաքում նախատեսվող ներդրումային ֆորումի կազմակերպչական աշխատանքների իրականացում <u>Նկարագրությունը</u> Հայաստանում օտարերկրյա ներդրումների խթանում, Հայաստանի մրցակցային առավելությունների և տնտեսության այն պոտենցիալ ճյուղերի ներկայացում, որոնք կարող են գրավիչ լինել օտարերկրյա ներդրողների համար		
1165 ԱԾ 04			
Քանակական		1	x
Որակական	Մշակված չէ	x	x
Ժամկետայնության	Մշակված չէ	x	x

Մատուցված ծառայության վրա կատարվող ծախսը (հազ. դրամ)	x	62500,0 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է բաղաքականության միջոցառումը Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդ		
Վերջնական արդյունքի նկարագրությունը Կազմակերպվելու է խոշոր ներդրումային ֆորում ԱՄՆ-ի Նյու Յորք քաղաքում, որի նպատակն է ներկայացնել Հայաստանը որպես ներդրումների համար բարենպաստ երկիր: Միջոցառումը լավագույն հարթակ կհանդիսանա երկրի ներդրումային միջավայրի, տնտեսական և մտավոր ներուժի ներկայացման, օտարերկրյա ներդրումների ներգրավման, ինչպես նաև պոտենցիալ գործընկերների բացահայտման համար:		
Ծառայություն մատուցողի անվանումը Հայաստանի զարգացման հիմնադրամ		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2016 թվականի
նոյեմբերի 10-ի N 1159 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն

Բաժին 2.

Գերատեսչության կողմից իրականացվող քաղաքականության միջոցառումների ծրագրային խմբավորումը

Ծրագրային դասիչը		Գործառական դասիչը (բաժինը/խումբը/դասը)	Ծրագիրը/քաղաքականության միջոցառումը	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)
ծրագիրը	միջոցառումը			ՀՀ 2016 թվականի պետական բյուջե (հազ. դրամ)
1165			ԾՐԱԳԻՐ	
			Ասիական զարգացման բանկի Ներդրումների խթանման ծրագրի շրջանակներում 2016 թվականի աշնանը ԱՄՆ-ի Նյու Յորք քաղաքում նախատեսվող ներդրումային ֆորումի կազմակերպչական աշխատանքների իրականացում	62500,0 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ
			<u>Ծրագրի նկարագրությունը</u> Ծրագրի նպատակն է խթանել Հայաստանում օտարերկրյա ներդրումները, ներկայացնել Հայաստանի մրցակցային առավելությունները և տնտեսության այն պոտենցիալ ճյուղերը, որոնք կարող են գրավիչ լինել օտարերկրյա ներդրողների համար:	

			Վերջնական արդյունքի նկարագրությունը Հայաստանի ներդրումային միջավայրի, տնտեսական և մտավոր ներուժի ներկայացում, օտարերկրյա ներդրումների ներգրավում, պոտենցիալ գործընկերների բացահայտում, Հայաստանի մրցունակության և վարկանիշի բարելավում	
			Քաղաքականության միջոցառումներ. Ծառայություններ	
	ԱԾ 04		Ասիական զարգացման բանկի Ներդրումների խթանման ծրագրի շրջանակներում 2016 թվականի աշնանը ԱՄՆ-ի Նյու Յորք քաղաքում նախատեսվող ներդրումային ֆորումի կազմակերպչական աշխատանքների իրականացում	62500,0 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ
			Մատուցվող ծառայության նկարագրությունը Օտարերկրյա ներդրումների ներգրավում, պոտենցիալ գործընկերների բացահայտում, Հայաստանի մրցակցային առավելությունների և տնտեսության պոտենցիալ ճյուղերի ներկայացում, գովազդատեղեկատվական նյութերի պատրաստում և տարածում:	
			Ծառայություն մատուցողի անվանումը Հայաստանի զարգացման հիմնադրամ	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ